ՓՈԽՀԱՏՈՒՑԵՆՔ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐՈՎ

Ցանկություն ունեի, որ թարգմանական ամսագիր ստեղծվեր և ամեն ամիս հայ ընթերցողը աշխարհի գրականությունից տեղեկություն ստանար, նորություն իմանար: Մեր գրական վարպետության վրա էլ կազդեր, գրողին կբարձրացներ, կծգեր: Այս ընթերցողը մեր «մենաշնորհը» չէր մնա, ընթերցողների պահանջները կմեծանային: Արձակի մասին է խոսքս, բայց սա կարելի է տարածել նաև պոեզիայի վրա, թեև սա առավել քմայքոտ մարզ է: Գրական քննադատության ամսագրի անհրաժեշտությունը ևս խիստ զգացվում է. քննադատների ջոկատը պետք է ընդլայնվի և ուժեղացվի. գրողի ոչ մի տողը չպետք է մնա առանց վերաբերմունքի, մինչդեռ գրական արտադրանքի զգալի մասը մնում է քննադատությունից դուրս: Այս գործոնները կնպաստեն մեր գրականության ուժեղացմանը:

Ստեղծվել է Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպը, որը, դժբախտաբար, հեղինակը չի հասցրել արտագրել, խմբագրել, մաքրագրել, վերանայել: Անկախ դրանից, հայրենասիրական լիցքի հետ միասին, նաև գեղագիտական հեռանկարային լիցքի գործ է: Միֆի, պատմության, լեգենդների վերարծարծման, ժողովրդի ոգու ընկալման, հողի և գրողի, ժողովրդի և գրողի հարաբերությունների ճիշտ ընկալմանն օգնող գործ:

«Մարութա սարի ամպերը» կարդացի և Մուշեղի կորստյան ցավը առավել խորությամբ զգացի: Անկրկնելի հեղինակ էր: Հրաշքի պես տղա էր: Բայց մեր գրականությունը կունենա շատ սերունդների նոր «զորակոչիկներ»: Վաղվա օրը լցնող անուններ էլ ունենք: Արձակի մեջ նշենք Մերուժան Տեր-Գուլանյանին, Վանո Սիրադեղյանին:

Անշուշտ, նվաճումներ կան, անուններ, գործեր, բայց կարծես այն հույսերը, որ տարիներ առաջ ավագները կապում էին իմ սերնդի հետ, լրիվ չարդարացրինք:

Հնարավոր է, որ իմ անբավականությունը բխում է մեր իրականության, մեր ժամանակի մեծ պահանջներից: Մենք պարտավոր ենք ավելի լավ գրել, ավելի խոր գրել, որովհետև մեր ընթերցողը քաջատեղյակ է աշխարհի դասական և ժամանակակից գրականությանը: Պետք է նկատի ունենանք գրականության համաշխարհային մակարդակը, այլապես ընթերցողին տանուլ կտանք: Պետք է մեր ուրախությունն ու ցավը կարողանանք պարտադրել աշխարհի չորս ծագերի ընթերցողներին, ինչպես նրանց գրողներն են իրենցը մեզ հաճախ պարտադրում: Համաշխարհային գրականության հայացքի տակ մեր խնդիրները, որ ամենից լավ մենք գիտենք, մեր խնդումը, մեր տագնապները, հեռանկարները

պետք է բարձրացնենք բոլորին հուզող մակարդակի:

Մենք հաճախ իրականությունն առանց բանաստեղծական թևերի ենք բերում գրականություն՝ իրականության և գրականության արանքից փաստորեն հանելով արվեստագետի կոչումը:

Գրականությունը պոեզիայի թևերով թևավորված, պոեզիայի մակարդակի բարձրացված իրականությունն է:

Հաճախ էլ, ցավոք, մեր մեծ նախնիների ստեղծած թևավոր, ոգիավոր արժեքները փորձում ենք վերախմբագրել: Մի խոսքով, սրբագործված գրական կերպարների վրա ենք ձեռք բարձրացնում: Չի կարելի: Մինչդեռ մեղավորս կարծում եմ, որ գրական ճշմարիտ արժեքը այնպիսի բան է, որի առաջ բոլոր դռները բացվում են: Արվեստի երդվյալ թշնամին անգամ իսկական գրական արժեքի առջև չի կարող տեղի չտալ:

«Մեր վազքը» և «Ծառերը» թեև նոր են տպագրվել, բայց դրանց ծնունդը նախորդ համագումարից առաջ է եղել: Այս ընթացքում տառապել եմ կիսատ մնացած գործերիս վրա, որոնցից դեռևս գրեթե ոչ մեկը վերջնականապես ավարտված չի. պետք է վերանայվի, խմբագրվի:

Կուզենայի վստահությամբ կարդալ ընկերներիս գործերը՝ հավատացած լինելով, որ առաջին հաջողված էջին հաջորդելու են ուրիշ լավ էջեր: Կուզենայի, որ այդպես էլ ընկերներս մտածեին իմ գործերի մասին: Նրանց ձախողումներն իմն են, քանի որ նույն լեզվի, նույն մշակույթի մշակներն ենք, միևնույն գործն ենք անում:

Վախով, տագնապով եմ նայում Հայկինոյի ամեն մի նոր գործը. ազգային կերպարը, որի ստեղծմանը լծված է մեր կինոն, պակասում է էկրանից: Ասածս վերաբերում է նաև երաժշտության, ճարտարապետության, նկարչության և հոգևոր մյուս բնագավառներին:

Սարոյանն ասում է՝ ոչ ոք չպիտի մտածի (գիտնա), որ իր հետ չեմ: Ավելի պարզ՝ գրողը բոլորի մեջ պիտի լինի: Է՛լ ավելի պարզ՝ գրականությունն այն է, որ յուրաքանչյուր մարդ կարդում և իրեն հասցեատեր է զգում, խորհելով՝ «Ի՛մ մասին է»:

Մենք պետք է այս բանին ձգտենք:

Հայաստանը արդյունաբերական, տնտեսական, գիտական արժեքներ է արտածում: Պետք է արտածի և մշակութային արժեք: Պատկերավոր ասած, մեր տուֆը մեծ սիրով են տանում: Ցանկալի է, որ գրական գործերի նկատմամբ ևս կարողանայինք առաջացնել նույնարժեք պահանջարկ:

Տխուր բան է համաշխարհային մշակույթի սպառող լինելը. պիտի նաև արտահանել:

Մեր դարը թարգմանությունների դար է: Անողոք բան կա սրա

մեջ: Թարգմանությունների այս մրցակցությունը դաժան մի պայքար է: Մշակութային պարտությունը հավասար է հոգևոր պարտության:

Համագումարը կարող է ազգային արժեքների նկատմամբ բարձր, խիստ պահանջների և բարյացակամության այնպիսի մթնոլորտ ստեղծել, որ ժողովրդի տված արժեքները մենք կարողանանք փոխհատուցել հոգևոր նույնպիսի գանձերով: